

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Փառափառական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻ 32

7 ՕԳՈՍՏՈՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթը (համագրական) Տ. Ա. — «Խոհի եւ Յուգի» Ռ. Յ. Պեպեքեանի (Գրականական) ԵՂ. ՈՒՄԴ. ԳՕԼԱՆՃԵԱՆ. — Գաւառացի կիներ. ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ. — Վրէժս (Նորալեզ) Մ. Ա. ՊՂԻՍԱՄԵԱՆ. — Սիրերգ. ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ. — Գաւառային գրականութիւն. «Ժամ. Կոյ Օհանը» ՄԵԼՕ. — Խմբագրական նօթք. — Զանազանք.

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի ծառեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դրօ. եւ գաւառներուն համար յիսուն դրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Յրանք. կամ 5 Բուլղարի: Բոլոր արտասահման ծախքը, Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու թիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակելիք ամէն շաբաթ անոն: Այն բաժանորդները որոնք պակաս քերք նսացած են, պէտք է իսկել իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուողութեան չեն առնուիր: Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիրամասչելի պայմաններով:

Զեմ-Բէ ԿԸ ՇԱԹՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه (ماسيس) غزتهسى ادارہسى

ԽՏԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլիս, Լալարբա

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 ՍՈՒՍՈՐԾ Ե

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

1881 ՍՈՒՍՈՐԾ Ե

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդորին ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գործած է իր բոլոր յաճախորդները իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հոն. բաժանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն թաղանթները, նաեւ Պօլսոյի, Թուրուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, Եւրօպի տեղերու մեծ թաղանթները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտիւրիէի, Օթէլի տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները, Բարսելոնայի, Պիսիայի, Բիլբաոյի, Լիսաբոնի, Բրանսաւական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritmes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէտլեք Եւլազ Խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆալ վաճառատուն մը, Եօւկայ Սահաֆար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՆ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»
ԿԵՆԱՅ ԶԻՒՆ		
Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵՆԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղեցիկ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bônéfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեքամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏԵՐԵՆՈՒՔԻՆ

Պոլս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքըրը Օղլու
Մաննաճիւղ, Ղալաթիա, Ինայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

4-10



ՅՈՎԱՍՏՓ ՊԱԼ ՊԱԼԵԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպարտաման

Բերա, Մեծ Փողոց, Բագսիւմ, քիւ 16

Զրահեան արաքսման

Պալապեան ամէն օր: ակոյայի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան որ եւ է
ժամուկ կարելի է դիմել: Պալապեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու յիշած ակոյ-
անքը: Տորեկները ակոյայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ: քաշել տուողին
նամքէն կ'ախեալ է: Վկայեալ ժամանակու-
թեան Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն
Դարձեալ մէջ: Ազգացներուն ճիշդ 4-10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Վ Կ Ա Յ Ե Ա Ն

ԻՍԵՒ ԱՏԱՄՆԱՐՈՅԺԱԿԱՆ ՎՐԱԲԱՐԱՆԷ

ԵՒ

ՊԱՇԵՐԻԷ ԺԵՆԵՎԻ ԲՈՅԵԱԿԱՆ ՎՐԱԲԱՐԱՆԷՆ

Կը բուժէ ակոյայի ամէն տեսակ ցաւեր
եւ լինտերաւ հիւանդութիւններ, կատարեալ-
գործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի
ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԻԻՕ-
ՆԷԻ դիմացը Կլապանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ
ցորեկ ողջատաց ակոյայ քաշելը ճիշդ է:

4-10

ՏԱՆԵՐԱՆՈՒԹԻՈՒՆԸ

զուսկներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ, երբ անոնց աչքը կը շուռնար, մոռածմունքի և նեղութեան պատճառ կրկնայ, եթէ այսպէս տկարացած տղու մը



SCOTT'S EMULSION

տրուի առողջութիւնը շուտ մը կը վերականգնայ և մոռածմունքը կը դադրի: Վասնզի Ընդօժի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր անձնաւոր կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ. Ժշտ

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԸՂՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է. Ասիկայ զԶեզ և Չեր զուսկները գեշեր ու ցորի, ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ. Ուշադիր պէտք է ըլլալ որ շինք մը արան այս նշանով վարդապետ փաթիլի մը մէջ է — եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԸՂՐՈՒԹԻՈՒՆ

փժշկութիւնը առած կ'ըլլաք: Բարձրագոյնները և բերն-ճարները և ծնունդը

Հիւանդութիւնը անոր առջին փուլէն ընել պէտք է:

22

ԳՈՐԾԱՐԱՆ

Դորգի մաքրութեան եւ նորոգութեան (Դրասենեակ Մանուտ — փաշա, Թարագորշար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը սաքրուին աղաթած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բուրդէ մաքն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ եւ է արաւ կամ հեաք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեղեցիկ (կիւզէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով զինքս առած գորգեր:

Սոյն գործարանը կը առանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղարկել գրասենեակը:

Դիւրամտալիկ պայմաններ:

4-10

ԱԴԱՍ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ քօհաֆիլի պարանց

Մեծ—Շուկայ, Բիւրքիներու դրան կից, Թ. 41-43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւ հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցիկութեան կը միացնեն տեղեւորութիւն, եւ դիւրամատ չեւի գինեւորութիւնը թիւն ու կ'ընծայեն հասարակութեան զաւարմանը:

Արամ—Վարդեան մեծալիս գօթ թողոցած է իր ընդամիջ յաճախողները, կ'որժէ որ Շուկայ ելլող մաքն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

4-10

Սոյն գործարանը կը առանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 32

7 ՕԳՈՍՏՈՍ 1904

ՇԱՐԱԹԸ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ

Ուսումնական Խորհուրդի ատենապետը վերջապէս հրատարակութեան յանձնեց այն բանախօսութիւնը զոր արտասանած էր Կեդրոնական Վարժարանի հանդէսին մէջ և որուն մէկ պարբերութիւնը «քար գայթակղութեան» եղած էր՝ մէկ կողմէ իր պաշտօնակիցներուն բողոքներուն տեղի տալու և միւս կողմէ իր հրաժարականը առաջ բերելու աստիճան։

Եւ սակայն պէտք կ'աւայտան աղմուկի։ Հանդէսը փակող «Պահպանիչ»ը հազիւ արտասանուած, Տօքթ. Թորգոմեան մեկնեց է սրահէն և տաք վիճաբանութիւն մը սկսեց է, իր բացակայութեանը, իր ճառին չուրջը, գոհացում տալու համար Կեդրոնականի ինստիտուտի թեմային որուն արժանապատուութիւնը վիրավորուած կ'ենթադրէին Ուսումն. Խորհուրդի ներկայ անդամները և կը յայտարարէին, միաբերան, թէ իրենք համամիտ չեն իրենց ատենապետին որ Պէրպլերեան վարժարանը յիշած էր Կեդրոնական վարժարանէն առաջ, կամ՝ երկրորդը առաջինէն ետքը։ Դասակարգութեան այս եղանակէն իրաւայդքան վշտացած էին Կեդրոնականի խնամակալները, — լուրջ, գործնական մարդիկ՝ մեծագոյն մասով, գովեստի բնաւին հետամուտ և իրենց վարած կրթական գործին միայն փարած, — թէ ոչ՝ Ուսումնական Խորհուրդի անդամները իրենց հերքումի, յետս կոչումի ծայրայեղ փութկոտութեամբ արծարծեցին միջադէպը։ Կարծիքները կը տարբերին այս մասին։

Իրողութիւնը սա է որ, քսանըչորս ժամ չանցած՝ Տօքթ. Թորգոմեան հրաժարական ղրկեց Ս. Պատրիարքին, բացարձակ կերպով գոհացում տալով ինստիտուտի թեմային նկատմամբ, մինչ բոլորովին ներհակ յայտարարութիւն մը կը պարունակէր իր հրաժարագիրը՝ իր ուսուցիչ—պաշտօնակիցներուն նկատմամբ։ Աւելորդ է ըսել թէ այս հրաժարագիրն հրատարակումը նոր երեւոյթ մը տուաւ միջադէպին, որ ինքնին կրնար անընդհան կերպով անցնիլ, և մտածողներ եղան թէ Ուսումն. Խորհուրդի ակնարկուած անդամները, որոնք միեւնոյն ժամանակ դասախօս են Կեդրոնականի մէջ, իրենք ալ պիտի փութային հրաժարիլ իրենց պատուակալ պաշտօնէն։ Յարգելի «խորհրդական»ները այդքան առաջ չի տարին իրենց զայրոյթի տպաւորութիւնը և նախամեծար սեպեցին ղրկուիլ իրենց Ատենապետին աշխատակցութենէն քան Ուսումնական Խորհուրդի անդամակցութենէն։ Արդէն, եթէ երբեք հրաժարական տային, այս պայմաններուն մէջ՝ իրենց հրաժարականն ալ պիտի մերժուէր, ինչպէս մերժուեցաւ Տօքթ. Թորգոմեանինը՝ Ս. Պատրիարք Հօր կողմէ որուն ձեռնհաս ու խոհական միջամտութեան շնորհիւ փակուած կրնայ նկատուիլ միջադէպը։

Բայց, այնպէս ըլլալ կամ ոչ, սա ճշմարիտ է թէ Կեդր. Վարժարանի ինստիտուտի ղրկուած իր վեց—եօթը տարուան խղճամիտ աշխատութեան արդիւնքը այնքան համեստօրէն ներկայացուցած պահուն, անխառն գոհունակութեան մը և անկեղծ գնահատումի

մը արժանի էր, ինչպէս արտայայտուեցաւ թէ՛ հանդէսին մէջ և թէ՛ անկէ ետքը՝ մամուլին միջոցաւ: Առաջ կամ ետքը յիշուելու պարագան երկրորդական ըլլալու է իրենց համար և հունի այն կարեւորութիւնը կամ դիտումը զոր անոր վերագրել ուղեր են ու մանք: Եւ նոյն իսկ եթէ հակառակն ըլլար, Ուսումն. Խորհուրդի ատենապետին բանախօսութեան սա մասը պիտի բաւէր փարատելու ահէն թիւրիմացութիւն. — «Կեդր. վարժարանի Պատ. Խնամակալութիւնն իր ըրածներուն թմբուկը զարնել չէր տար և հիացմամբ կը տեսնենք այսօր թէ քանի համեստութեամբ եւ ինչ գովելի գործունէութեամբ աշխատած է նա լոկի միջիկ, իր խնամքին յանձնուած վարժարանը նախանձելի վիճակի մը մէջ դնելու, յաղթելով մեծամեծ դժուարութեանց եւ մեղուաջան փութով ժիրաժիր վաստակելով: Մեր անկեղծ գոհունակութիւններն ուրեմն և մեր ջերմ շնորհաւորութիւններն առ Պատ. Խնամակալութիւնն Կեդր. վարժարանի, մաղթելով որ իր աշխատութիւններն ապագային ա՛լ աւելի բեղուն ըլլան, մանաւանդ ա՛լ աւելի յարատեւ»:

Այս մաղթանքը ընդհանուրինն է, լինոյս վստահութեան ճը հանգամանքով:

Տ. Ա.

Ամասիոյ և Մարզուանի բարեջան առաջնորդ Գեր. Արիստակէս եպիսկ. Վանքեան որ եպիսկոպոսական ձեռնադրութենէն ի վեր առաջին անգամ ըլլալով մայրաքաղաքս եկած է, այցելեց Ս. Պատրիարքին և Կրօն. Ժողովի երկու ատենապետ Սրբազաններուն, և կընդունի եկեղեցական ու աշխարհական ծանօթ անձնաւորութեանց բարի դալուստի և շնորհաւորական այցելութիւնները: Տ. Արիստակէս Սրբազան լուրջ ու խոհական եկեղեցական մըն է որուն հնգամեայ առաջնորդական պաշտօնավարութիւնը գոհունակութիւն միայն պատճառած է ինչպէս իր ընդարձակ թեմին մէջ՝ նոյնպէս Աղգ. Պատրիարքարանին, և կուգայ կարճատեւ արձակուրդ մը վայելել: Ամասիայէն ի Կ. Պոլս,

իր ուղեւորութեան միջոցին, ամենուրեք համակրութեամբ ողջունուած է, այցելելով վանք, եկեղեցի ու դպրոց, ինչպէս համակրութեամբ ողջունուեցաւ նաև այստեղ թէ՛ Պատրիարքարանի պաշտօնական մարմիններուն եւ թէ՛ իր բոլոր ծանօթներուն կողմէ: Տ. Արիստակէս Սրբազան հիւրընկալուած է իր հոգեւոր ծնողին՝ Տ. Բարթողիմէոս Սրբազանի բնակարանը և քանի մը շաբաթէն Պրուսա պիտի ուղեւորի՝ իր ծնողաց այցելելու:

Մայրաքաղաքիս իտալական նորընտիր դեսպան Իմէրիալէ մարգիդը հինգ լաթիօրը Աղգ. Պատրիարքարան գալով փոխադարձ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր որ շնորհաւորութեան գացած էր իրեն: Դեսպանը այցելեց նաեւ Մայր եկեղեցին:

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐժԱՐԱՆ

Ի Բ Ա Ն Կ Ա Լ Պ Ի

48ր+ ՏՍՐԵՇՐՋՍՆ

Վարժարանս վերստին կը բացուի 1/14 սեպտ. 1904:

Վարժարանս ունի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne, Realschule) Ծրագրեր՝ միջ-վարիս պիտոյիցը յարմարեալ:

Լեզուներ. — Հայերէն, Թուրքերէն, Գաղղիերէն, Գերմաներէն, Անգլիերէն:

Գիտութիւններ. — Ուսողական, բնագիտական, բնապատմական, պատմական, (կ'աւանդուի Գաղղ. եւ Գերմ. լեզուներով):

Առեւտրական Աշխարհագր. Թուրքերէն, Թղթակցութիւն (Գերմ. Գաղղ. Անգլիերէն):

Ուսումնական Ներքին եւ արտաքին՝ 20 ուսուցիչներ պիտի դասախօսեն:

Նորմալ աշակերտաց ընդունելութիւնն Օգոստ. 16էն կը սկսի:

Պ.Ա.ՐԻՋ

Հ. ԳԱՐԻԷԼ Ծ. Վ ՄԷՆԷՎԻՇԵԱՆ

1-10

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

“ԽՈՂՔԵՒՅՈՒՇՔ”

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տխրութեան մէջ ամէնէն աւելի կը յայտնուին մարդուն իղձերը, իր ներքին ծածկաշուն ձգտումները, իր հոգեկան զարգացումին աստիճանը իր միտքը բնորոշող, իր կեանքին ուղին մատնանշող իսկական գիծերը, ինչպէս՝ ցորչափ կը թանձրանայ ամպը՝ ամէնէն աւելի կ'որոշուի իր ձեւը, իր բովանդակ ծալքերուն կոհակաւորումին իր բովանդակ երանգներուն խլրտումին մէջ, և իր ձեւին հետ իր ճամբան։ Այն ատեն, ուսումնասիրելու առիթը, մանրադննելու գործը կը սցուի ինքնին։ Այսպէս է որ բնախօսներ մեր հոգեկան հիւանդագին վայրկեաններուն հայեցողութենէն հանած են մեր գործարանաւորութեան օրէնքներուն գլխաւոր մասը։ Ամէնէն կնճռոտ, ամէնէն անձնական հիւանդութիւններէն պարզ և միառողջութեան օրէնքներուն գացած են, ներդաշնակ տիեզերական բնութեան խոյացած են։

«Խոհք և Յուշք»ի պարագան ալ այս ճանաչումի օրէնքին մէջ է։ Անով գիտենք հաստատապէս չօչափել մարդկային իսկութիւնը, այդ գրքէն արտաբերուած հոգեկան տխուր կացութիւնը կարող կ'ըլլայ շնորհել մեզի մէկը այն ճամբաւ դիրքերէն ուրկէ աչքը յստակօրէն և հեշտիւ կը գրկէ մարդկային հոգւոյն չըջանակը։ Ուրիշ տխրութիւններու մէջ, ինչպէս արուեստապաշտներուն (dilettante) քմայական հծծիւններուն, եսասիրական անիմաստ տարականոն պոռչտութիւններուն մէջ հազիւ կրնանք որոշել աննշան աղեղ մը այդ չըջանակէն և միւս մասը կը նուաղի եսասիրութեան դառնահամ կծու մառախուղին մէջ։ «Խոհք և Յուշք»ի նիւթը կին մը չէ՝ կարծես, այլ կիներ, մահ մը չէ՝

այլ մահը։ Ամէնքս ալ, ինչ խառնուածք ալ որ ունենանք, կրնանք բաժին մը հանել հեղինակին անձնական տխրութիւններէն։ Այդ տխրութեանց ամպին որ և է մէկ ծուէնը որ անձնական թրթռումով կը դողդոջէ, գիտէ հպիլ մեր սրտին և, պզտիկ ընդբախիւնով, մեր յուզումնական աշխարհին վերաբերիլ։ Եթէ մերթ հեղինակը կը զբաղի մի՛ միայն իր անձնական յիշատակներուն քաղցրագի զօրութեամբ, իր անհատական ցաւերուն ընդարձակ դառնութեամբ, ա՛յն ալիքներուն պէս միայն կը գործէ որոնք վայրկեան մը, ամենի՛ խոփու, վե՛ր վե՛ր կը շեղին ծովէն, և յետոյ, օդին մէջ, բիւրեղային երազուն փայլիւնով կը կլորնան, մարգարտաթափտ խոհասպիտակ կը կամարնան, վերադարձի հզօր համբոյր մը շաղկեւնելու համար ծովուն մէջ, Այդ «ծովը» ուր կըզգայ պէտքը վերադառնալու, հին բնագանցութիւնն է ան, հին հաւատքը, մարդը սահմանող՝ աւարտող մտքի վերջնական խոյանքը, «գերբնական ապաստանարանին» քնարերգութիւնը՝ առանց որու հոգիին յուզումնական կոհակները պարապին մէջ կը շառաջեն։ Եթէ «Յուշք» դառն են, «Խոհք» դառնք կը փրկեն. միտքը կը փրկէ կեանքը՝ թէև ինքն ալ պարունակուած մը ըլլայ կեանքին մէջ։ Վասն զի, հեղինակին մէջ բոլոր յիշատակները, դեռ յիշատակ չեղած, դեռ իրողութիւնները չնիւթած անոնց աւարկանները, յարատեւ խորհրդածութիւններ էին նախապէս, մտաւորական կանխորոշ տրամադրութիւններ, կամեցողութեան մշտաներկայ լարումներ, բոլոր ինչ որ մտքին կը պատկանի, և ոչ թէ անհատական կեանքին մասնաւոր պատահարներուն վայրկեանական բուռն տպաւորութեանը։ Եւ կրնանք նոյն իսկ յառաջանալ՝ ըսելու համար թէ իր յիշատակներն են որ աղդուած են իր խորհրդածութիւններէն և ո՛չ թէ այս վերջինները իր յիշատակներէն, կամ, ուրիշ կերպ խօսելու համար, իր յիշատակներուն կսկծագին երանգները կը ստորաբաժնուին իր մտքին կենդանի և մի գոյնին, և իրողութիւններուն անողոք քմայքը՝ իր գեղեցկին առնական ուղիղ կամեցողութեանը։

Ասոր համեմատ, չպիտի կրնայինք պահանջել բանաստեղծէն որ կէտ առ կէտ ներկարագրէր իր յիշատակներուն մէջ պարփակուած գիծերը. թերեւս անոնք իր խորհրդածութիւններէն նուազ գեղեցիկ ըլլային այն ատեն: Չպիտի կրնայինք հարցնել, օրինակի համար, թէ այն կինը զոր կ'ողբայ, իրօք Աստուծոյ մը վսեմ եօրկն եր...

Եւ քափանցիկ պատեալն անոր՝ իր մարմին, կամ թէ՛

Խօսքին, ձայնին, իր եութեան մեջ բոլոր, Գեղափառի երկնաբուրիկ մի շնորհ,

Վասն զի այս տողերը բաւական կը պատմեն կիցն և ոչ՝ թէ կին մը առհասարակ. — աւելի խորհրդածութիւն մը քան մասնաւոր զգայութիւն մը. աւելի վերացում մը՝ քան անհետացում մը. աւելի գաղափար մը քան պատահար մը: Տակաւին չե՛մ յիշատակեր այն տողերը ուր այդ իտէպատկերը կը կատարելադործուի, ուր աւելի կը լայնայ, ուր աւելի կ'անօրոյնայ վերացումի միակերպ՝ անգիծ եթերը զոր բանաստեղծական խանդավառ հոգին միայն գիտէ վարդերանգել իր երակով և զեղուլ իր բարոյական կամքին ներդրութեամբ:

* *

Դիտե՛նք մտքի նշանաւոր վաստակաւորներու ամուսնութեանց պատմութիւնը: Բնախօսական միակ օրէնք մը կը ցցուի հոն որ քործարանաւորական հաւասարակշռութիւնը կը սահմանէ և սեռային բնազդը ներդաշնակութեան արուեստ մը կ'ընէ, կատարելութեան զգացում մը: Այրը հզօր ըլլալով, պարզ միամիտ բարի կնոջ մը ստուերին կը յարի, և ներդաշնակութիւնը կը հաստատուի: Կին մը en nature, պարզութեան մէջ գեղեցիկ, զուարթութեան մէջ վայրի, ուղիղ և յստակ, միամտութեան մէջ խելացի և խորունկ, խստաձօքին մէջ զիւրին և արդար: Եւ Պէրպէրեան ա՛յնքան հպարտ է իր սիրային ընտրութեան մէջ, այնքա՛ն գոհ և ուրախ իր ներդաշնակութեան գիւտին մէջ, որ չի վարանիր ըսել իր ողբերգած սիրելի կնոջ համար:

Իմ Տօրոքես եր ան, անոր պէս պարզուկ, Գեղասեսիլ ու վեհամուտ ու բարի:

Եթէ կինը պէտք մըն է, կինը կեանքին իմաստութիւնն է նաև. զուարթ ներդաշնակութեան անմրէպ բանալին. հանդարտութեան և պայծառամտութեան անսպառելի կամեցողութիւնը, գիտակցութեան յաւիտեանականութիւնը գծող շունչ մը. «աշխատողին» փառասիրութեան պարապը լեցնող համբոյր մը:

Զի աշխատողն այ, ո՛հ, նման է զուցն Որոյ ճիշեր կնոջ երգով կը ցածնուն:

Այդ «աշխատող»ը գիտէր, կընդգգար կինը, և երբ կը սիրէ զայն, կը կատարելագործէ ինչ որ գիտէր անոր մասին: Կնոջ կը նայի իբրեւ մեծ Բնութեան աչքին, վասն զի կնոջ կամքը միայն գիտէ Բնութիւնը, վասն զի կինը անոր զուարթ խորունկ անայլայլ նախնականութեան խորհուրդը կը հընչեցնէ իր մարմինին բոլոր բլիչներէն: Լէյրը — արուեստ — մղուող և դժգոհ, լրումը կ'ըլլայ բնութեան այդ մարմնացած կամքին, — իր յոռետես յառաջդիմական մղումներուն մեծահունչ ժամերը կնոջ բեղմնաւոր հանգիստին լուռ ժամերուն ընդբախելով միայն գիտեն ապրիլ, ինչպէս փրփրադէզ գալարուող ալիքները մամռագեղ սեպածե հանգչող երկնապիլ ժայռին զարնուելով մանաւանդ գիտեն կրկնուիլ, տեւել, երգել յաւետ կենդանութեան և ներդաշնակութեան պարը, և առանց այդ ժայռին՝ կը մարին կ'աւարտին հորիզոններու թափուր ամայի դալկութիւններու մէջ կամ, ասդին, աւաղին վրայ՝ աւաղին հետ կը հարթուին...

Սիրոյ զգացումը փառասիրութեան զգացումին հետ պէտք է միանայ. առանց անոր՝ աւելորդ զարդ մը պիտի ըլլար դաւակներու ծնունդը. և, անճանկան դարձուածք մը տալու համար իմ հաստատումիս, կ'ըսեմ թէ դաւակները այդ սէրը կ'իմաստաւորեն, զայն կատարելութեան շրջանակ մը կ'ընեն, ինչպէս պտուղը որ, հասունցած, կ'իյնայ վայրահակ ճիւղէն, շրջանակ մը կը գծէ ծառին

ուռճած կէտին հետ: Ամուսնութենէ ետք,
զաւակներու ծնունդէն ետք, ճշմարիտ սէրը,
փոխանակ մարելու ա'լ աւելի կը հաստատուի
ուրեմն:

Սո՛ւն է սիրոյ դամբան կոչել գնիմեն .

Կամ այդպիսիք գիշար երշեմ սիրած չեն :

Միայն փառասիրութեան վառ երակ մը որ սիրահարին անհաստանալովիւնը՝ իր մրտաքին մասնաւոր գիծերը և իր հոգիին մասնաւոր երանգները կրկնել կը ճգնի զաւակներու մէջ, հոն արտաքինութեամբ՝ առարկայացած տեսնել, աւելի կատարեալ արուեստով, միայն այդպիսի փառասիրութեան հրայրք մը հին սիրոյն հետ հաշտ, կրնայ հեղինակին շարաթուել տալ իր զաւակներուն մէջ իր գիծերը, նկարագրել տալ անոնց մէջ ինչ որ եփնքը՝ իր բնութեամբ և իր կամքով, կամ ինչ որ կր կարծէ որ քլլալ իրմէ՝ անոնց մէջ։

Այսպէս, ետեւ եւ Յուսէի մէջ կը դառնանք
Զերմ «ս'րահարը» Զերմ փառասէրին հետ:—
Եթէ անկեղծ սիրահարը կը հեծէ.

Պարապին մեջ գոր ինք բոզուց, սիրսս
հալի:

առաքինի փառասէրը կը մռնջէ

Ու հուճճիքն օր հա՞րկ է ու ան հոս չըլ-
լալ:

Կըզգաս թէ՛ իր ամբողջ տխրութեան մէջ՝
խոհուն աշխուականութիւն մը կայ. —յառաջ-
դիմական ուժերու հոծ մխանք մը և ոչ թէ
թմբեցուցիչ թոյնի մը, ուրախութեան նախ-
նական անվթար կայեցողութեան խորունկ
հետապնդումը. ներդաշնակութեան փառա-
բանութիւնը. մեծ՝ կարող բաներու՝ իմացա-
կան լայն փթթումներու մոռնող տենչը.
ինքնավստահութեան դօրեղ քաղցրութիւնը
շօր փառասէրին աճեհի կամքը կը ճաճանչէ
մտքին բնութեան խորանին վրայ. լացող բա-
ներու երազուն գրգանքը, ծանրահոս ար-
ցունքի ստեղծիչ գոհ կորովը... Իր դա-
սական առոյգութենէն, իր ներդաշնակու-
թեան խորունկ կամքէն՝ ամէն բան կայ իր
տխրութեան մէջ. հո՛ն վհատութիւնը չի՝
թմբեցներ, այլ մտածել կուտայ. շարունա-
կել յառաջդիմել կուտայ կեանքը. յանդի-

Խորհուրդ մը կալ: Բան մը երկնից մեջ
անբաւ,
Թեեւ ալ զմեր չկարենալ զնոցէլ գաւ:

Անշո՛ւշտ հոն ուր Պէրպէրեան չի մտածեր,
ուր մտածումին ջիղը կը շարժի ներքին բուռն
զգացումին երկարածիդ շունչէն, շա՛տ ճիշդ
է, նոյն իսկ գերազանց ուրիշ վայրկեաններ
իջ. և այս երկտողեակն ալ յանկարծ դուրս
յայտուած է, անարուեստ, միամիտ, կայծակ-
նամաքո՛ւր, անդիմադրելի ուժի մը պէս :

Բայց այս ամենուն դէմ կամ, այո՛ , այս ամենուն հետ , երբեմն միեւնոյն զգացումը կրկնութիւններ կան որոնք աշունի հողմա- վար լալազին ամպերուն պէս կ'անցնին և կը դառնան նորէն . տիրութեան արտայայտումը գրեթէ միեւնոյն պարբերութիւններ , միեւ- նոյն ի փաստի աշխատուած իրերայաջորդ- օրինակներ , կամ , եթէ կ'ուզէք , իրարու նմանող հարցումներ , — կսկծազին վայրկեան- ներու յատուկ անխնամութիւններ՝ գրեթէ

ամէնքն ալ: — Նոյն իսկ կա'ն մէկ քանի միս-
թիք խօսքեր որոնք Պէրպէրեանի քերական
ուղիղ յստակ մտքին բնութեան բաւական
օտար են, բաւական յանդուգն շեղումներ
են իր մտածումին աշխատութեան կերպին,
իր գաղափարներուն ներակազմութեան ե-
ղանակէն և որոնց գոյութիւնը բացառիկ
տխրութեամբ միայն անշուշտ կ'արդարաց-
ուի: Այսպէս՝ «Սառ նայուածքը յառած
տարտամ մի բանի»: — «Ա'հ, աչքիս մէջ հա-
լեցաւ հուսկ իր նայուած — Հողիս իր հետ
նա գերեզման է տարած»: — «Նս կմ, բայց
ինձ ես կը թուիմ մի օտար»: — «Մէջս անընդ-
հատ կ'ապրի ան կեանքն իր դարձեալ: Ու
կը կարծեմ կը համակրէ՝ մեզ դարձեալ»: —
«Ու գիտունն ալ անյաւակնող, գլխիկոր,
Սուրբ ժամերուն կ'երթայ խոնարհ ուխտա-
ւոր»:

Պէրպէրեանի մէջ, այս միսթիք շեղում-
ները իր գաղափարներուն չեն պատկանիր,
այլ իր տխրութեան բուռն վայրկեաններուն,
հետեւապէս անոնք իսկական նշանակութիւն
մը չունին նոր էջ մը բանալ զօրելու համար
իր մտքին ձգտումներուն պատմութեան մէջ,
— ինչպէս որ ահսովոր եսասիրութիւն մը
բնական ըլլալով անկողնոյ ծառայողի մը,
անիկա չի զօրեր արմատապէս փոխելու մեր
կարծիքը իր բարոյականին վրայ և իր կոշտ
եսասէր մը դատելու զայն:

* *

Ամիոսիենք: Կ'ուզեմ ցոյց տալ գրքին
միութիւնը, կամ, աւելի ճիշդ, հեղինակին
միութիւնը. վասն զի գրքին մէջ հարցերը
յաճախ հարցումներ են որոնց ստուերին հղօր
լուծութեան տակ իր բովանդակ էութիւնը կը
թրթոյս յաճախ, ինչպէս վտիտ տերեւ մը
ընդարձակ փոթորիկին մէջ: Բայց իր յու-
ղումները և անոնց արտայայտումի կերպը
կը մատնեն զինքը: Իր տխրութիւնը միակ
շահեկան բանն է ուրեմն որ գծէ իր ձգտում-
ներուն ուղին: Հոն դարձեալ կ'երեւայ իր
քերական անյողդողդ միտքը՝ յստակութեան
կամքով լուսաբարձած: Պէրպէրեանի վրայ
խօսիլ, ուղիղ բանին վրայ խօսիլ է, մաքին
յղացած սահմանումներուն կատարեալ վեր-

ջին արտայայտումին վրայ խօսիլ է: Եւ եթէ
իր սիրտը տուած է իր տխրութիւններէն,
իր միտքը աւելի քերական հղօր ու կուռ
ճշդութեամբ արտայայտուած է: Եւ սա՛ ան-
հնարինօրէն համառօտ սահմանումը զոր մեղի
կուտայ:

Խորհի՛ր, անանցն անցաւորին տակ գտնել
կըզմայլեցնէ մեզ իր կատարելութեան ա-
ռոյգ գեղեցկութեան մէջ, իբր արդարեւ
«անանց» մշտայժմեայ սահմանում մը, ամէն
ժամանակի մէջ յեղեղելի: Պէրպէրեան,
քերականին, արուեստագէտին ընտիր արտա-
յայտումի ճշդութեան հետ, — իմացականու-
թեան բուռն պաշտամունքը ունի: Անհատին
մէջ կը փնտռէ մարդը, և մարդուն մէջ ա՛յն
տիեզերական նախնական մշտառոյգ բնու-
թիւնը որ ուղիղ է, անվթար, ներդաշնակ,
որ միշտ կ'աշխատի, կը բխրաստեղծէ ինք-
զինք՝ իր կարողութեանց մէջ կատարեալ
համեմատութիւններով: Աւելի՛ գեղեցկու-
թիւն, աւելի լոյս, ահա՛ ինչ որ կը վկայէ
իր միտքը: Վերջին կատարելութիւն, ան-
նախորդ և անյաջորդելի լրո՛ւմ, ահա՛ ինչ
որ կը պօռայ իր արուեստին բոլոր կամքը,
իր ուղիղ և կատարեալ արտայայտումի
կամքին հանճարը: Կըսպասէինք որ Պէրպէր-
եան դէր գիրք մը սահմանումներու որոնք,
ընտրջութենէն վեր, ճառագայթէին իրենց
կատարելութիւնը ամէն ժամանակի համար,
որոնք յունական դիցարձաններու անվիճե-
ւորէն կատարեալ ձեւը ունենային, — աւար-
տած բաներուն վերջին գեղեցկութիւնը որ
չի տեսնուիր այլեւս որ չի խոկար այլեւս,
այլ որ տեսնուիր ու խոհ իր մէջ կը բովանդա-
գծէ, իր մէջ կը լրագործէ:

ԵԳՈՒՄԵՐԻ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻ ԿԻՆԸ

Գաւառացի կինը՝ այն օրէն երբ ամուս-
նական լուծը կուղայ ծանրանալ իր վիզին
վրայ՝ կ'ըլլայ սարուկ մը, դժբաղդ արարած
մը, որ պարտաւորուած է ամէն աշխատու-
թիւն յանձն առնել, քանի որ ինք հարս մըն

է, ու օտարին տունը գացած է: Առտուրն է մինչև իրիկուն, դաշտերու մէջ, կիզիչ արեւու այրող ճառագայթներուն տակ, կ'աշխատի, կը տքնի, կը ցանէ կամ կը հնձէ, կը քաղէ ու կը ժողվէ, ամէն բան կ'ընէ: Այնքան ողբալի կ'ացութեան մը մէջ կը գտնուի, որ մարդ արգահատանքով մը միայն կրնայ նայիլ իր վրայ: Չկայ գործ մը որ կիները չտեսնեն կամ չկատարեն. տնական ամէն գործ, մաքրութիւն, տաւարներ նայիլ խնամել, կթել, մածուն շինել, սեր հանել, վերջապէս ամէն բան պէտք է տան տիկինին կամ ստրուկ դարձած կնոջ ձեռքէն անցնի: Իւր փերջը դաշտին մէջ, օրն ի բուն, կամ այգիներուն մէջ այրիլ, մրկիլ, ու այսպէս քաղքեյ կենդանային գոյութիւն մը: Կարծես թէ անոնք բ'ուրթեան զաւակները չեն, կամ մէկ խօսքով մարդ կոչուելու արժանաւորութիւն չունին: Բոլոր այս տաժանելի աշխատութեանց վրայ բարդեցէք նաև որդեծնութիւնը, զաւակներ անուցանելը, զանոնք մեծցնելը, խնամելը, ա'լ մարդ կրնայ երեւակայել թէ ի'նչ է գաւառացի կնոջ դիրքը իր տանը մէջ: Այս ամէնքը կուգան միանալ կազմելու և ներկայացնելու համար գաւառացի կինը որ անխօսուն է ու համակերպող բնաւորութեամբ մը կը խոնարհի իր ամուսինին, տաքեր, կենքով, և տակաւին ընտանիքի կարգ մը անդամոց որոնց խօսքերը պատգամի մը տպաւորութիւնը կը գործեն խեղճ կնոջ վրայ:

Կարելիէն աւելի պատկառանք մը կը պահէ իրմէ մեծ նկատողածներուն առջև, բնաւ չհամարձակիր խօսիլ անոնց հետ, և եթէ բան մը հասկցնել պէտք ըլլայ, հարկ անհրաժեշտ է նշաններով խօսիլ և նշաններով պատասխանել: Իր ամուսինն և զաւակներուն հետ հազիւ կրնայ խօսքեր մը փոխանակել: Ուրեմն գաւառացի կինը՝ ուրիշ բան չէ', բայց եթէ պարզ փայտէ մեքենայ. անգամ մը լարուած է, միայն հիւանդութեան և կամ մահուան ատեն կրնայ դադրիլ. որքան ատեն որ կ'ապրի՝ պէտք է աշխատի, աշխատութենէ խոյս չի կրնար տալ: Իրաւ է թէ այնքալ կ'աշխատի, բայց կնոջ աշխատութեան

հետ բաղդատելով շատ ոչինչ է էրիկ՝ մարդուն յոգնութիւնը:

Հաճեստութիւնը, գաւառացի կնոջ նկարագիրն է կարծես, այնպէս որ կրնանք ըսել թէ բոլոր կիներն ալ հոս գաւառին մէջ կրնան ներկայանալ համեստութեան տիպարներ: Օրինակելի պարզութիւն մը կը կրէ իրենց զգեստը որ միշտ տեղական դրոշմը ունի իր վրայ, և բնաւ չփոխուիր, այնպէս որ ամէն օրուայ և կիրակնօրեայ կամ տօնական օրերու զգեստները նոյն ըլլալ կը թուին: Ծաշակի պակասութիւնը շատ զգալի է: դարերէ ի վեր ի'նչ որ տեսած են այն կ'ընեն ու կը պահեն, առանց անկէ քայլ մը իսկ հեռանալու և նշանախէյ մը իսկ փոխելու: Ինչ բարքերը ու սովորոյթները փոխելը սրբապղծութիւն կը համարուի գաւառացի կնոջ համար: Ծաշակի պակասութիւնը զգալի է նաև այրերուն քով, որոնք հակառակ երբեմն շատ տեղեր տեսած ըլլալուն, բնաւ չեն փոխուիր, և փոխուելու ալ կամք ու դիտաւորութիւն կը պակսի իրենց քով: Զարգանալու տենչը իր կայծը չունի իրենց բնութեանը մէջ:

Գաւառացի կինը բառին բովանդակ և լայն նշանաբութեամբը տգէտ է, իր մտքին հորիզոնը ա'յնքան է որքան իր ապրած միջավայրին հորիզոնը: Այբուբենի չորհնորէն զրկուած է ի սպառ, գիրքն ու գրիչը տղամարդոց մենաշնորհը նկատուած է. ի'նչ պէտք է աղջիկներուն ուսում սորվեցնել և կամ զանոնք դպրոցի մէջ կրթել ու դաստիարակել: Դժբաղդաբար մանչերուն ալ չեն տար պէտք եղած կրթութիւնը, և շատ կանուխէն իսկ արդէն կը հանեն զանոնք դպրոցէն, ու կ'ընեն կամ հովիւ, կամ երկրագործի աշկերտ և կամ ծնողքներ իրենց հետ մէկտեղ կ'աշխատցնեն: Բնական է որ այս տեսակ պայմաններու մէջ անկարելի է որ զարգացած անհատներ հասնին: Եւ ոչ մէկ գիւղի մէջ, շատ գաւառներ, աղջկանց վարժարան չկայ, և ասիկա առաջին նշանն է թէ աղջիկը մեծ նշանակութիւն մը չունի գաւառացիին համար, հող չէ թէ իր բոլոր աշխատութիւնները օր մը անիկա կատարելու դատապարտուած պիտի ըլլայ:

Յայտնի է թէ այսօրուան գաւառացի կնոջ ունեցած դիրքը՝ մեղ յիշեցնել կուտայ հին օրերու մէջ ապրող կանանց վիճակը, որ բնաւ տարբերութիւն չունէր, եւայի աղջիկներուն ունեցած լքեալ կացութեան: Այս պարագան կործնեմ բաւական է ցոյց տալու համար թէ ո՛րքան անտարբեր է այր մարդը գաւառի մէջ, որ բնաւ երբեք ջանք մը ընել չուզեր կնոջ դիրքին աղնը-ւացման համար. և կ'աշխատի զանիկա միշտ իր խեղճ ու կրակ դիրքին մէջ պահել: Եւ արդէն շատ պարագաներու մէջ զգալի կերպով կ'երեւայ տղամարդուն անտարբերութիւնը կնոջ հանդէպ: Շատ անգամ ինք ուրախանալու առիթներ կ'ունենայ կամ կըստեղծէ, ընկերներով կը զուարճանայ, կը դուրսու, կ'երգէ, կը խաղայ, ու մարմնապարար ժամեր կ'անցընէ, սակայն բնաւ չմտածեր անոնց մասնակից ընել նաեւ իր կինը, իր ընկերը: Ամէն բանէ՝ զրկուած պէտք է ապրի գաւառացի կինը, ուրախութիւնը կարծես իրեն համար նշանակութիւն չունի, քանի՜ որ իր ճակտին վրայ գրուած է աշխատանք և ստրկութիւն: Բնական է որ այս տեսակ ընթացք մը երբեք չպիտի բարեփոխէ կնոջ դիրքը ու նա պիտի չարունակէ մնալ իր ողբալի կացութեան մէջ: Սակայն պէտք է խորհիլ թէ այր մարդուն ազնուացումը կախում ունի կնոջ բարձրացումէն, կնոջ տգէտ վիճակը պատճառ պիտի ըլլայ որ այրն ալ միշտ նոյն ստորնութեան մէջ մնայ: Սա միշտ կոշտ վերաբերում մըն ալ ունի իր կնոջ նկատմամբ, ինչպէս որ տմարդի ճիապաններ կամ կառապաններ՝ բաւական չեն համարիր իրենց անասունները աշխատեցնել, այլ կը նախատեն զանոնք ու կը ծեծեն, միեւնոյն կերպով կը վարուին նաեւ շատեր իրենց կանանց հետ, ու աշխատութեան մեծադոյն բաժինէն զատ, ծեծի, նախատինքի, շրկումի բաժինն ալ կը հանեն, առանց յիշելու իրենց խոստումը, զոր հաւաքաբաւ տուած են իրենց հարսանեկան միութեան օրը՝ ընտրելով զանիկա իրենց ընկեր, մտերիմ, հոգեհատոր: Ապրելու այս կերպը կը չարունակուի, ու տակաւին նշոյլ

մը իսկ չկայ կնոջ դիրքը բարեփոխելու. արգիտութեան կնիքը տակաւին իր դրոշմը պիտի կրէ անոր՝ գաւառացի կնոջ ճակտին վրայ: Անշուշտ օր մը պիտի եղծուի այն, և սակայն գաւառացի կնոջ այսօրուան վիճակը քննելով՝ տակաւին շատ հեռու կը տեսնենք այն օրը: Եւայի անէծքը անէնէն աւելի իրենք են որ կը կրեն կարծես, գաւառացի կինները, որոնք գուցէ շատ անգամ կը զղջան նոյն իսկ աշխարհ գալերնուն համար, վասն զի անտանելի է գաւառացի կնոջ կեանքը. նախ աղջիկնութեանը համակերպիլ իր հօրը քմահաճոյքներուն և ապա իր ամուսինին, ստորուկի մը կեանքը ապրիլ և ամրուկի մը աշխատանքը ունենալ, կեանքը անտանելի կ'ընեն ո՛րքան ալ անիկայ գտնուի գեղեցիկ բնութեան մը ծոցին մէջ սառնորակ աղբիւրներու մօտ, հովանուտ ծառերու տակ, ընդարձակ պարտէզներու մէջ: Շատ մը գեղատեսիլ խնձորներ փտտած կ'ըլլան. գաւառացի կնոջ կեանքը թերեւս հեռուէն երեւայ գեղատեսիլ խնձոր մը. որուն մէջ սակայն ընտանեկան ու ամուսնական տառապանքի որդը իր մահաբեր գործը կը կատարէ անշուշտ:

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱՅՈՒՆԷԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, ել. առաւօտ: Գիշերօթիկներու տարեթոյակն է 12 օամ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ.ի մէջ, և կէսը Յունուարի մէջ: Շաբաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օամ. ոսկի և երկու դասի համար 5 օամ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1ուկէս ոսկի աւելի կը վճարեն: Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն ձրի կը շրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հառու, Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, ատենապետ խնամակալութեան, Ա. տաքաղար:

ՎՐԵԺՍ

(ՆՈՐԱՎԱԿԱՆ)

— Ես միջակ զգացումները չեմ սիրեր, մարդ կամ ատելու է ե կամ սիրելու է, ա՛յսպիսի. մնացածը տափակութիւն է, միա- մտութիւն է, անորոշութիւն է: Ինչո՞ւ կը վարանիս պատասխանելու, ա՛յո կամ ոչ... րո՞ւն, մի՛ ամէնար. ինչ որ ալ ըսես, վստահ եղիր որ ինծի հաճոյք պիտի պատճառես:

Ձէի խօսեր, խորհրդափակ լուծեամբ մը անոր ըսածներուն կը հետեւէի:

— Ձեռ պատասխաներ, այո՛, չես ուզեր պատասխանել. ամբողջ տարի մը կ'ըլլայ որ մտերմացած եմք իրարու, եւ այսքան պա- ղատանք, խնդիրք, արցունք, խելայեղումք ու աչքիդ պարապ բաներ կ'երեւան: Սար- սախելին հոն է որ բան մըն ալ չես զգար: Ձգալ չես գիտեր: Եթէ դիտեամ որ կատես զիս, թերեւս սիրուած ըլլալու չափ գոհ ըլ- լամ: Երկու ծայրերը. կամ առէ, եւ կամ սիրէ բոլոր կեանքի ուժովդ: Ընթացքդ կը սոսկացնէ զիս, կը յուսահատեցնէ:

Ա՛լ վարժուեր էի այս բացատրութիւն- ներուն: Այնպէս որ տաղտուկ չըզգալով՝ հան- դերձ, տեսակ մը թաքուն հեշտախնդրու- թեամբ կ'ուզէի ունկնդրել անոր՝ տասնըութը տարեկան այդ նրբիրան ու խելայեղիչ աղ- ջըկան՝ որուն ամէնէն տխուր վայրկեանը յուսահատեցուցիչ պահը իմ ներկայութիւնս էր ապահովաբար. վասն զի բառ մը չէի աւելցներ իր խօսակցութիւններուն վրայ եւ բնաւ չէի տեղի տար իր փափուկ ու թարմ ըղձանդի հրապոյրներուն, դիւթութիւննե- րուն, չնորհներուն: Տեսակ մը անզգայ մար- դու պէս կը նայէի իրեն, հեռաւոր բարե- կամի մը պէս:

Շարաթ մը վերջը, սովորութեանս հա- մեմատ երեքարթի գիշեր մը, երբ նորէն իրենց գացի, զինքը սովորականէն չա՛տ աղուոր ու չա՛տ յանկուցիչ գտայ: Ճերմակ շրջազգեստը այնքան բարեձեւօրէն կ'ան- գայտացնէր, կը նրբացնէր, դիւթական տես-

լերեւոյթի մը կը նմանցնէր զայն. ոտքերը նրբաւարտ կոշիկներու մէջ սեղմուած, մէջքը փափուկ, մաղերը գլխուն վրայ խնամով ամփոփուած, գրգալի, համբուրելի էակ մը դարձեր էր վերջապէս:

Ժպտեցայ: Ան ալ խնդաց:

Երբ մինակ մնացինք, ինչպէս կը պատա- հէր երբեմն, աղուոր արտասանութեամբ մը ըսաւ, ինծի մօտենալով.

— Ահ, տեսնես որքան բարկացայ, երբ երէկ իրիկուն մէկը ըսաւ որ այսինչ գոյգը իրար կը սիրեն այնպէս ինչպէս տակաւին ո՛չ ոք սիրած է աշխարհիս վրայ: Նախան- ձեցայ անոնցմէ: Կուզեմ որ սիրոյ այդ ուժգնութեամբ ե՛ս միայն սիրած ըլլամ:

— Ըսել է այդքան կը սիրես:

— Ձափաղա՛նց, ըսաւ անխելի ձայնով մը: Հինգ վայրկեան վերջը դարձեալ մի- նակ մնացինք:

— Ինչո՞ւ զիս կը սիրես այդչափ, յարեցի:

— Անոր համար որ սիրելու պէտք ունիմ: Դուն պէտք չունիս եղեր, ատիկա իմ հոգս չէ՛: Կը բաւէ որ ես կը սիրեմ: Ահ, եթէ նոր, անդրաշխարհիկ լեզու մը ըլլար, որուն միջոցաւ կարենայի հոգեկան վիճակս բացատ- րել, էութեանս տաքնապումը նկարագրել, Շա՛տ երջանիկ եմ նորէն, կը ձգե՛ս որ տա- ռապիմ քեզի համար. առիկա ալ բան մըն է վերջապէս: Ձեմ հասկնար, արդեօք սիրե՞լ չես գիտեր, արդեօք սիրելու ուժդ սպառած լինցած է, չատ աւելի ըզձալի ու հրեշտա- կային աղջկան մը քով: Ինչո՞ւ չես սիրեր, ըսէ՛, բա՛ն մը ըսէ...

— Ե՛ս ալ չեմ գիտեր...

— Ձե՛ս գիտեր...

— Այո՛, եւ կ'ուզեմ որ դուն ալ չգիտնաս:

— Բայց ես կը պահանջեմ որ ըսես:

— Ձանա՛ մոռնալ...

— Ձեռքս չէ, եւ չեմ կրնար: Նիակարան կրնամ ցամքեցնել:

Ան իրիկունը ես ալ տառապեցայ, իմ կողմէս: Կը հալածուէի շարունակ, անոր նայուածքէն, մարմինին մոգութիւններէն, ձայնէն, շունչէն, բուրումներէն: Եւ զար- մանալի չէք գտներ որ, ես իմ ուզելովս

կ'երթայի իր ձեռքն իյնալու, ամէն երեք շաբթի կանոնաւորապէս, իր այնքան մաքուր ու չքեղ հոգիին գինովութիւնը, բաղձանքներուն խենթութիւնը, չը փոխարինուած զգացումներուն, պաշտումին ամբողջ անըջային արքայութիւնը դիտելու, անզգայութեամբ, առանց յուզումի, միամտօրէն: Տառապելու պատճառներ ունէ՞ր: Ո՞վ գիտէ, բայց ես սաչափ մը գիտեմ որ այդ գիշերը բնաւ չկրցայ քնանալ:

Միտքս երբ բան մը դնեմ, անպատճառ կը կատարեմ: Նոյնիսկ եթէ գիտնամ որ այդ ընթացքս ինծի շատ սուղի պիտի նստի, նպատակէս չեմ շեղիր:

Կընկրկիմ, տեղի՞ պիտի տամ արդեօք այս անգամ, կը հարցնէի ինքնիրենս: Զիրար տարամերժող, հակասական, միամիտ, անհանդուրժելի, անաւոր հարցումներ կըսկսէին միտքս, հոգեկան վիճակս տագնապել, այնպէս որ պառկած տեղս, ի՞նչի անանկ կուգար որ վտանգաւոր կացութեան մը մէջ կը գտնուէի այդ պահուն: Անոր չարժումներն ու խոսակցութիւնները երեւակայութիւնս կը գրգռէին և իր ձայնը, նայուածքը, շունչը ահողջ զգայութիւնս կընդարմացնէին, էութիւնս կը հալմէին զօրաւոր ու անդիմադրելի ազդեցութեամբ մը: Վաղը երբ լուսնար, արդեօք իր ոտքերուն տակ պիտի երթայի իյնալ, ներում խնդրելով տուած տառազանքներուս, պատճառած անստուգութիւններուս համար: Արդեօք պիտի փոխարինէի՞ իր զգացումներուն, պաշտումին:

Զրպասեցի որ երեքշաբթին գայ, շաբաթ գիշեր նոր գիրքի մը պատրուակով անոր գացի նորէն: Միտքս դրած էի որ պիտի խոստովանիմ սէրս և ճամբան՝ բացատրելու արտակարգ, բանաստեղծական եղանակներ կը փնտռէի, հարցումներ կը շինէի ինքնիրենս ու պատասխաններ կը գտնէի, միշտ ինքնիրենս, միտքիս մէջ:

Այնպէս մը եզաւ որ առիթ չգտնեմ իրեն հետ խօսելու: Ակնարկները հեղուկ կրակի մը պէս երակներուս մէջ հոսեցան:

Տունէն մեկնելուս անհուն թաղութիւն

մը, ցնորեցուցի՜ տրամութիւն մը իջաւ հոգիիս վրայ և վախցայ որ, փողոցին անկիւնը դեռ չանցած, յուսահատութենէս, անհամբերութենէս, գերագրգռումէս պիտի լամ, պիտի սկսիմ լալ հոտ, զգայնոտ աղու մոլեգնութիւնովս, անփորձութեամբս:

Մինչև երեքշաբթի փոխուած էի սակայն: Կամքիս տէ՛րն էի դարձեալ, այսինքն շատ տղայ կը գտնէի ինքզինքս, այդ փոփոխութեան ենթարկուած տեսնելու համար: Այդքան: Այդքան պէտք էր որ տեւէր հին, զսպուած վրէժի մը սոսկումը: Պէտք էր որ այսքան շուտ տեղի տայի, միւսին չափ սիրուն ու հրապուրիչ աղջկան մը նոր քաղցութիւններուն: Ես խենթի չէի: Ո՞ր միւսը՝ հին դիցուհիս, դեռ միտքս էր: Տակաւին կը սիրէի զայն կարծես, մութ, անփոխարինելի, բարձր, անհամեմատ կերպով յուիրական սէրով մը և... և սակայն ասիկա ալ ո՛չ նուազ աղուոր ու ո՛չ նուազ զգլխի էր:

Զհասկցուած, անկարելի, տառապաղին սէր մը եղած էր միւսին հետ ունեցածս, նոյնիսկ անաւոր, մոլեգին՝ շատ մը պարագաներու մէջ: Այնքան հատուածէ, ինքնալլկումէ, խոստովանութիւններէ վերջը մէյ մըն ալ կը տեսնէի որ կ'ըսէր. — «Ես ձեզի աղէկ կը ճանչնամ. սրտի հաճոյքներ կը փնտռէ՞ք միայն. էրիկ մարդերը միշտ անանկ են արդէն»: Եւ զիս, աներեւակայելի թափով մը պաշտող հոգի, սովորական մարդու մը նմանցնել սրտի տեսակէտով, ես որ ամբողջ հարիւրաւոր բանաստեղծութիւններու մէջ, սիրային կատաղութիւնս, անհամբերութիւնս, անյուսութիւնս կ'արտայայտէի և իր ոտքերուն առջև կը դնէի: Տարակուսա՞նք: Բայց ինչո՞ւ կասկածիլ սիրոյ մը վրայ, որ համակ խանդ, բորբոքում, ամբուլութիւն, հիւժումէ գրեթէ: Ա՛րդեօք, կը մտածէի, պէտք եղածին պէս չէ՞ի կրնար ինքզինքս բացատրել: Ու վստահ ըլլալով հանդերձ թէ աշխարհիս ամէնէն ապուշ, ամէնէն անտրամաբանական բանն է առանց փոխարինութեան, ասանկ, առանց գոհունակութեան սիրելը, ես դարձեալ զայնիկա կը սպառէի և անոր ցոյց տուած

անկարելիութիւններուն, թերեւս քիչ մը անիրաւ պատճառաբանութիւններուն մէջէն, զինքը անքան մոլեգնութեամբ կը սիրէի որ ուժերս սպառած կ'երեւային ալ, ու այս տարիքիս մէջ իսկ քառասուն յիսուն տարեկան մարդու մը զգալիք յոգնութիւնը կ'իմանայի բոլոր շարժումներուս, հառաչանքերուս, քայլերուս մէջ:

Սիրելու ու սիրուելու անհուն կարօտ մը կը տոչորէր զիս. կ'ուզէի ընկուզիլ մխըրճուիլ անոր նայուածքին անհուն փրփուրներու յաւիտենական դիւթութեանը մէջ: Եւ ո՞րքան անկարելի երեւար ասիկա ինծի՝ ես անքան կը գրգռուէի: Ո՛չ մէկուն համար կը կարծէի այդքան տառապած ըլլալ: Միտքս կը դնէի մոռնալ երբեմն, ու երբեք չէի յաջողեր: Այսօր վերջին օրս պիտի ըլլայ. կ'ըսէի իրեն, իմ ուզած եղանակով քեզի պաշտելուս, և յաջորդ օրը, բնաւորութեանս ծայրայեղութիւնը, միտքիս տարապայման կերպով անորոշ վիճակը, սիրոյ խենթութիւնս, անձանթ, ահաւոր խղճի խայթէ մը չարչարուիլս, զիս անանկ դիրքի մը մէջ կը դնէին որ մեռնիլը բան մը չէր: Կը զղջայի ըսածիս վրայ, ու օր մը վերջը ալ աւելի տենդոտութեամբ, անյոյս սպասումով մը, անաբեկութեամբ մը կը սիրէի... և ասիկա, այս տառապանքը շարունակուեցաւ մինչև այն օրը. ուր ինքզինքս հատած, լմնցած զգալով, հեռաւոր անկիւն մը քաշուեցայ, սուգս լալու համար:

Ու հիմա, տարիներ վերջը, ուրիշ ազուր ու զգլխի աղջիկ մը, ո՛վ գիտէ սիրտի ի՞նչ տարօրինակ ու անդիմադրելի պէտքէ մը մղուած՝ եկած զիս դարձեալ սիրելու կը հրաւիրէր: Այս անգամ ուրիշ մէկը, դէմինս, ուրիշ մը որ ինքնիւրն է կամ էր, միւսէն բոլորովին տարբեր պայմաններով, հաւանութեամբ, տեսակ մը բնորոշութեամբ, և ես չէի ուղեր... այսինքն չէի կրնար:

Փոթորկալից կեանք մը սկսաւ ալ ինծի համար, ճակատագրականօրէն արդէն զրգռողութեան դատապարտուած, աքցանուած, քաշուած կեանք մը, ուր ապրելու գոյութիւնս միայն զգալու և երազելու ցնո-

րական վերլուծումներու մէջ կ'երեւար, անկից անդին բան մը չձգելով բնաւ, ո՛չ իսկ պատրանքի վայրկենական գոհացում մը:

Անոր սէրին մէջ բնա՛ւ տարակոյս չիկար: Կը սիրէր զիս այնքան՝ որքան ես պաշտած էի միւսը: Միեւնոյն տուայտումներուն, սարսուռներուն, գալարումներուն կ'ենթարկուէր ան հիմա՝ զորս ես արդէն չատճնց զգացած էի: Եւ այս անգամ ալ ես էի որ պատճառներ ցոյց կուտայի, տեղի չէի տար. սրտի հաճոյքներ վայելել կ'ենթադրէի՝ դիմացինիս դիտաւորութիւններուն մէջ, տղայ կը գտնէի զայն դեռ անփորձ, ու կ'ըսէի, միւսին բացատրութեան հակառակը գործածելով. «Օհ, կիները բոլորն ալ կը ճանչնամ: Անոնք ամէնքն ալ իրարու կը նմանին, իրենց անձէն իսկ կը ձանձրանան և վայրկեանէ վայրկեան ուրիշ սէրեր, հաճոյքի կեանքեր կը փնտռեն»:

* *

Չիս իրեն մօտեցնելով, մութին մէջ, ուրիշ երեքաբթի իրիկուն մը, կրկնեց նորէն, իմ անտարբերութեանս ակնարկելով.

— Ժորժ Սան ազուր խօսք մը ունի, celui des deux qui aime le moins est celui qui souffre le moins. Ճիշտ անանկ կ'երեւաս դուն ալ, իմ հիւժումս քեզի հաճոյք կը պատճառէ կարծես, գերազանցապէս ուրախ, զուարթ կը գտնեմ կոր քեզի, ու այդ քրքիչներդ, ծիծաղներդ, նախանձս, շարութիւնս կը գրգռեն:

Ու սննեակին մութէն օգտուելով աւելի՛ մօտեցաւ ինծի և շունչը՝ մաքուր ու ձիւնախառն անարատութեամբ մը՝ իմ զգայութեանս վրայ օրսկելով, շարունակեց.

— Միշտ ասանկ, հէ՛, երբեք պիտի չըփոխուիս: Ի՞նչ տարօրինակ գաղտնիք կայ ատոր մէջ, չե՛մ հասկնար: Այսքան անզգայութիւն, այսքան պաղութիւն, ա՛հ, Աստուած իմ, մարդս ինքզինքէն կը հանէ: Չեմ կրնար խաբել անձս, չե՛մ կրնար գաղափարներուս, զգացումներուս հակառակ բան մը ընել: Մխիթարութիւն մը, գերադոյն սև անխառն մխիթարութիւն մը, գտած պիտի ըլլամ պաշտումիս փոխարինութեանը մէջ,

բայց բա՛ն մը ըսէ, խօսէ՛... ինչո՛ւ կը լռես...

Դուրսը, սալաքարերուն վրայ, գիշերապահներուն ճովանը կը թնդար: Երկինքին վրայ հրաշալի պայծառութեամբ մը, կապոյտ ու անգայտ ամպերով քողարկուած, լուսինը կը ծիածանէր. կը ծիրաներփնուէր, անհուն տարտամութիւն մը, թաղծութիւն մը լալով շարունակ գիշերուան մէջ, ու մութին մէջէն դէպի պատշգամբ դալով, լուսինին լոյսով տեսայ որ ընկերուհիս ալ կուլայ յամրաբար, վրէժ մը լուծելու նպատակէս անգիտակ, տղու չարութեանս վրալ, սիրոյ այս անփոխարինելի զգացումին համար: Եւ արցունքոտ աչքերը վրաս սեւեռած պաշտելիօրէն, ըսաւ, հեծկտուքը զսպել ջանալով.

— Երանի՛ թէ երկուքէս մէկը ծնած չըլլար...

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Վ ԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱՆ

25^ր օգոստոս

Վարժարանը, իր 25-ամեակին առիթով վերակազմուած նոր և լաւագոյն կարգադրութիւններով, կը բացուի Դ. օր. Սեպտ. 7ին (Ն.Տ.): Առեւտրական ուսումներ մեծ տեղ մը կը բռնեն բարեփոխեալ Ծրագիրին մէջ: Վարժարանին ուսմանց ընթացքը վեցամեայ է, 2 տարի նախապատրաստական, և 4 տարի ալ Վարժարանական կարգերու համար: Ուսուցչական Մարմինը կը բաղկանայ հմուտ և փորձառու ուսուցիչներէ, որոնց ծրագրէնքերու ընթացաւարտներ են, և 1ը համալսարանական մը: Առողջական տեսակէտով՝ Վարժարանին զիրքը անդուգական է: Իր յատուկ բժշկը մօտէն կը հսկէ աշակերտներուն առողջական վիճակին վրայ: Տնօրէնը և ուրիշ 4 գիշերօթիկ ուսուցիչներ, որոնք վարժարանին չէնքին մէջ կը բնակին, մօտէն կը հսկեն աշակերտներուն վարք ու բարքին վրայ: Վարժարանին տարեթուական է 16 օամ. ոսկի, որուն կէսը Սեպտ. 1-ի սկիզբը վճարելի է, և միւս կէսը՝ Յունիսի վերջերը:

ԾԱՆՈԹ. — Կ. Պոլսէ եկող հին և նոր աշակերտները կրնան կէս գինով Հայտար — Փաշայի երկաթուղիով Իզմիտ գալ, դիմելով մինչև Օգոստ. 18/3, Պայպըլ — Հաուս, Գրիգոր էֆ. Շահպաղեանի: Վարժարանին նոր յայտագիրը ստանալու համար դիմել Մր. Ո.Ո. Բիթի, Պայպըլ — Հաուս, Կ. Պոլիս: 3—10

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԺԱՄԿՈՉ ՕՅԱՆԸ

(ՊԱՏԿԵՐ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՂԵՔԷ)

Թէ իսկապէս ինչ ծագում ունէր ժամկոչ Օհանը, ինձ բոլորովին անյայտ է. ծանօթ է միայն անոր սրտածմբիկ վախճանը:

Օհանը բարձրահասակ էր ու յաղթանդամ. մեծ աչքերը, հաստ շրթունքներն ու լայն երեսները դէմքին կուտային մայլ արտայայտութիւն մը: Ինքը այն մարդերէն էր, որոնց վրայ ժամանակը շատ դանդաղ կերպով կը դրոշմէ փոփոխութեան կնիքը. կարծես միշտ նոյնն էր, ոչ կը մեծնար, ոչ կը պղտիկնար: Օրուան մէջ որոշ ժամերու կը գտնուէր միեւնոյն տեղը: Ծանր քայլերով շուքի պէս կ'անցնէր փողոցի պատի տակերով կամ առուի ափի ուռիներուն ու բարտինքի տակէն: Բալուածքի սովորական չափը քիչ մը կը թեթեւցնէր միայն ա'յն ժամանակ, երբ ժամերը յառաջացած կ'ըլլային, մինչ ինքը իր տեղը չէր բռնած եկեղեցւոյ ամենայն տիպի աջակողմեան սեան ձախ կողմը: Ժամուն անշարժ իրերէն մէկն ալ Օհանն էր, մեծ սեան հետ անբաժան ժամերգութեանց ժամանակ: Եղանակը ինչ ալ ըլլար, ձիւն կամ անձրև, ցուրտ կամ տաք, իրեն համար միեւնոյնն էր, առտու իրիկուն, ժամը դեռ չսկսած պէտք էր ներկայ ըլլար մինչև որ բոլոր ժողովուրդը քաշուէր, և եկեղեցիին հետ դուրս կուգար: Ոչ մէկ առիթ չէր փախցնէր իր աշխատութեամբ օգնելու ժամկոչ-

ներուն, որոնց պաշտօնը արդեօք իր չափազանց հաստ թէ չափադանց բարակ ուղեղի մէջ դարձած էր խտելական բան մը:

Երեք ժամկոչներն ալ Նախնանի առարկայ էին Օհանին, իրենց առաւելութիւններով: Ամէնէն գլխաւորն այն էր, որ անոնք կուշտ էին մանաւանդ այդպիսի թանգ տարի: «Կուշտ ուտելը, կը մտածէր յաճախ Օհան գլուխը ծռած, խեղճ ու կրակ կծկուած աշխարհիս վրայ ունեցած իր միակ սեպհական տեղը, ուր ոչ ոք իրաւունք ունէր կանգնելու, նայելով ժամկոչներուն, կուշտ խմելը» և կիյնար երազանքի մէջ...: Յետոյ կը դառնար դէպի տաճար, առանց ուշադրութիւն դարձնելու ժամերգութեան, հաստ բազուկները կը տարածէր և կըսկսէր մրմնջել, «Այ Աստուած, Բե'դ եմ ապաւինել, Բո ոտն եմ ընկել, մի կուշտ փորով խմեմ, մի կշտանամ, հոգիս ա'ո»:

Ժամկոչութենէ աւելի մեծ բախտաւորութիւն կարող էր երեւակայել Օհանը, Եկեղեցիին դուռը կը փակէին ժամկոչները, բանալին ալ իրենց քով կը մնար, ալ սուրբերէն ինչ պակաս էին. Աստուած տա՛, դրան բանալին մարդ իր գօտու մէջ ունենայ, կը նշանակէ արքայութեան բանալին ալ նորա կողքին ունենալ, Օհանի խեղճութիւնը մեծ մասամբ արդիւնք էր իր բարեպաշտութեան և այն հսկայ սարսափին զոր ունէր մեղք գործելէ:

Օհանը խեղճ էր, բառին բուն նշանակութեամբ, մէկ երկու կտոր ցնցոտիներ և ծակ կօշիկներ կը կաղմէին իր ամբողջ հագուստը: Ահագին մարմնի մսերն ու ոսկորները պարարտացած էին զրեթէ մուրացկանութեամբ, բայց աւելի պատուաւոր տեսակով, այսինքն կը մտնէր տուն մը, կուտէր տրուածը, ոչինչ չէր տանէր հետը, որովհետեւ ոչինչ չէր աւելնար:

Օր մը հարուստ մեռել կար. Օհանն ալ բա՛ն մը առաւ և թաղման րոպէին կանգնեցաւ գերեզմանի առջև: Այդ առթիւ մէկ քանի ղուրուշ շահեցաւ զոր ամուր բռնեց իրահագին մատներուն մէջ և վաղելով փուռ ամբողջ փողը լեցուց հաց ծախողի ձեռքը ու

առաւ 12 հաց: Բաշտեցաւ գերեզմաննոց, ծալապատիկ նստաւ պատի տակ, հանգոյցներէ միայն բաղկացած գօտին թուցուց ու սկսաւ ուտել: Երբ ոտքի ելաւ, գօտին դարձեալ սեղմեց:

* *

Օհանը իր բարեպաշտութեան արդիւնքը վայելեց օր մը. Աստուած լսեց վերջապէս անոր աղօթքը և իր մօտ կանչեց ժամկոչներէն մէկը, տեղ բանալով բարի Օհանին:

Օհանը այլեւս ժամկոչ է յունուարի 1էն. իր ուրախութիւնը չափ չունի, իր փառքի գազաթնակէտին է հասած:

Այլեւս ժպիտը անպակաս է ժամկոչ Օհանի հաստ ու անճոռնի շրթունքներէն, անսահման ուրախութիւն մը կը ճառագայթէ անոր բոլի աչքերուն մէջ: Շատ մը բաներու հետ փոխած էր նաև քաղելու ձեւը, աւելի արագ շարժելով: Որի որ պատահէր կըսէր. իսկ եթէ մարդ չգտնար՝ ինքն իրեն կը կրկնէր անդադար. «Փառք քեզ Աստուած, հազար փառք, միայն Դու գիտես ինչ կանես»:

Այն աստիճան կտրիճ դարձած էր այժմ Օհանը, որ չէր թոյլ տար միւս ժամկոչներուն ծառայութիւն ընելու, իսկ եկեղեցիին դուռը անպատճառ ինք պիտի փակէր, կողքի սեմը տասը քսան անգամ պիտի համբուրէր, նոյնքան ալ խաչ հանէր ու ապա խուցը քայսէր:

Առաջին չաբաթ օրը Օհանը ուղարկուեցաւ բաժկի բերելու: Թէև մէկ քանի թաս ալ իրեն տուին, այնուամենայնիւ ճամբան սիրտը կը բաբախէր գինիի շիշին տակ, խմածը հաղիւ տեղն էր հասել և դեռ աւելի կը զրգուռէր ախորժակը: Զբաւականանալով ձեռներով շօշափելէ՝ որոնցմով ամուր բռնած էր շիշը, քանի՛ քանի՛ սնգամ դուրս հանեց ծոցէն փողոցի մէջտեղ և ագահ հայեացքով դիտեց կարմիր գոյնը: Կ'ուզէր մէկ անգամէն բերնին դնել ու խմել. բայց քահանաներէն ունեցած երկիւղը կը կասեցնէր զինքը: Հասաւ եկեղեցի, ուր քահանան կըսպասէր իրեն, շիշը անոր յանձնեց. առանց աչքը հեռացնելու մինչև որ քահանան շիշի հետ անյայտացաւ սեղանի ետև:

Օհան իր սովորութեան համեմատ փակեց եկեղեցիին դուռը, համբուրեց ձախակողմեան քարէ սեւանը, երեսը խաչակնքեց, և երկաթէ մեծ բանալին ձեռքը՝ հպարտ հպարտ մտաւ խուցը, ուր կը քնանար միշտ պաշտօն ստանալէն ի վեր:

Մթնեց. ժամկոչ Օհանը խուցի առաջ պատշգամի տակ, սալայատակի վրայ կերթեւեկէր անդադար: Խելքն ու միաքը, ունքըն ու ուրուշը դարձած էր միայն գինիի չիչին վրայ: Այն թունդ կարմիր գոյնը, որ կարծես կեռար նայողի հոգու մէջ, ինչո՞ւ չեռար Օհանի ստամոքսի մէջ:

Եկաւ քնանալու ժամանակը Օհան իր խուցը մտաւ քիչ մը բան ուտելու. հաց ու պանիր կար միայն, բայց այդքանով ինչ կ'ըլլար, այդ կտոր հաց ու պանիրը փորին ո՞ր կուշտը տեղաւորէր խեղճը, այն ինչ եկեղեցիին մէջ որու բանալին իր մօտն էր, տաճարի ետեւ կը գտնուէր . . . :

Նեղուելով խցիկի խաւարէն, դարձեալ դուռս եկաւ բակը: Սարսափելի ցուրտ էր. յունուարի այն լուսնկայ գիշերներէն մէկն էր, երբ ամէն ինչ տեսակ մը սառնութիւն կը ներշնչէ մարդուն, միատեսակ սպիտակ ձիւնի սաւանէն սկսած մինչև լուսնի աղօտ ու տմոյն լոյսը, ծառերու քօսացած ու ձիւնով ծածկուած ճիւղերէն սկսած մինչև ճոռութեան ներքէն կախուած սառույցի լուլաները. բոլորը, բոլորը կարծես կը շնչէին մարդու ականջին: «Սառելու ըտպէ է»:

Եղանակն պէս սառն էր և Օհանի ստամոքսը, որ ճիգ կը թափէր տաքնալու: Չկարողանալով երկար դիմանալ ցուրտին, մտաւ խուցը, ընկաւ անկիւնը գտնուած կապերտներու կտորտանքներուն վրայ, պարզուեցաւ ու վերմակի պէս բան մըն ալ քաշեց գլուխը: Գոցեց աչքերը, ամուր փակեց, բայց քունը չէր տաներ. փորձեց մէկ երկուք համբել մինչև հարիւր, ճար չեղաւ, մինչև անգամ երբ համբանքը քանի մը անգամներ կրկնեց. չիչով կարմիր գինին կը կենար միշտ իր առաջ: Համբերեց, սպասեց. երբ աչքերը քիչ մը տաքցան, իրեն այնպէս թուեցաւ, թէ գինին

չիլը բերնին դրած կը կկկացնէր և հրաշալի հեղուկը հանգիստ վար կ'ինջնէր . . . Ինչ հիանալի էր, ինչ զովարար, ինչպէ՞ս համեղ . . . բայց ինչո՞ւ չէր կշտանար վեր թռաւ յանկարծ . . . ափսո՞ս, երազ էր:

Ախորժակը աւելի գրգռուեցաւ այժմ, կարծես կրակ կար ներսը, մանաւանդ կերած հաց ու պանիրը ծարաւն աւելի կը սաստկացնէին: Անկողնին մէջ նստած՝ աչքերը պտտեց մթով թեան մէջ, ծոծրակը քերեց անագին մասներով, բերանը ճիճփացուց, ծուլաբար յօրանջեց ու ելաւ նստաւ, գաղափար մը ծագած էր մտքին մէջ. շօշափելով պատը՝ գտաւ եկեղեցիի դրան բանալին ու դուռս եկաւ:

Դրան վրայ կանգնած՝ բաւական ժամանակ նայեցաւ լուսնին, որ կը շողար երկնահամարին վրայ, եկեղեցիին արեւելեան կողմը, ապա զգոյշ քայլերով սարսափահար գողի պէս մօտեցաւ եկեղեցիին: Շէնքի ձգած շուքին մօտ կանգ առաւ, ականջները սրած ուշադրութիւն դարձուց չըջկայքը թէ մէկը չկայ, և երբ խուզարկութեան արդիւնքը մեռելային լուծիւն եղաւ, հազիւ շարժելով մտաւ ստուերի մէջ և ուղիղ կանգնեցաւ եկեղեցիի դրան առաջ, Բանալին զգուշութեամբ մտցուց փակի մէջ, չըթուանքները ամուր խածնելով ոլորեց բանալին դէպի աջ, փակը ամուր չսկաց. Օհանի արիւնը կարծես սառեցաւ երակներուն մէջ, բայց թողուց իսկոյն դուռը, որ ծանր ճաշակով բացուեցաւ, իսկ ինքը սարսափահար ետ փախաւ. երկու ձեռքերով գլուխը բռնած՝ մտաւ խուցը ու դուռը ամուր փակեց: Կանգնեցաւ դրան ետեւ ու աչքերը լայն բացած սկսեց մտմտալ. «Բայց չէ՞ որ այնտեղ սուրբ է, գինին տաճարի ետեւն է, ասիւր ինչպէս բարձրանաւ սեղան . . . »:

Անորոշ մտածումներու մէջ բաւական վարանելէ յետոյ բացաւ դուռը, բայց չէր համարձակեր առաջ անցնիլ: Սկսած ինքն իրեն սիրտ տալ. «Ինչ յիմար եմ, ինչո՞ւ կը վախնամ, ո՞վ կայ այստեղ ինձմէ դատ, ո՞վ կարող է տեսնել. կը գնամ կը խմեմ»: Օհանը բոլորովին

յիմար չէր, այսքան պատճառաբանութիւններու շարք մը կրցաւ իսկոյն կազմել իր ուղեղին մէջ. այնուամենայնիւ սիրտը կը թփրտար, այն երկիւղը թէ ինք գործ ունի արբութեան հետ՝ իր հոգիին կ'աղղէր:

Վերջապէս ստամոքսին պահանջը յաղթեց սարսափին և նորէն առաջ մղեց զինքը: Այն յոյսը թէ ոչ ոք կար չուրջը, կը սրտապնդէր զինքը: Այս անգամ աւելի դիւրին հասաւ եկեղեցիին բաց դրան. սեմէն ներս ոտք դնելուն սարսուռ մը անցու դարձեալ երակներէն, ներքին կռիւր զօրեղ էր: «Գնամ թէ չգնամ», կը կրկնէր անդադար մտքին մէջ Օհանը և հազիւ շունչ կ'առնէր:

Գմբէթին արեւելեան կողմի պատուհաններէն լուսնի շողերը անցնելով կը տարածուէին պատի և յատակի վրայ, լուսաւորելով եկեղեցիին ետեւի կողմը: Իսկ սեղանի երկու կողմի անկիւնները և սիւներու խոյակներուն շուրջը պատած էին թանձր խաւարով: Զահի ապակիները կը շողային լուսնի շողի տակ, իսկ սեղանին առջև հազիւ կը նշմարուէր ձէթի կանթեղը՝ որ կը պլպլար աղօտ լոյսով: Տպաւորութիւնը աղդու էր և Օհան քանի մը անգամներ խաչակնքեց երեսը — «Սա՛յը, յոյսը, հաւատը զօրավիգ մինչև անգամ գողերու» և սկսաւ յառաջանալ:

Սրտատրոփ ու զարհուրած՝ մատի ծայրերուն վրայ մօտեցաւ սեղանին, ծոցեցաւ համբուրեց, ժամաչապիկ ձգեց ուսին ու ձեռներով ոտներով բարձրացաւ մարմարէ սանդուխները. շունչը բոլորովին բռնած՝ բացաւ խորանի աջակողմեան գուռը և անցաւ սեղանի ետեւ:

Բոպէն անաւոր էր. խաւարի մէջ կարծես ամէն կողմէ մէյ մէկ հրէշային գլուխներ կերելային որոնք կը մօտենային Օհանին. ծայրահեղ սարսափի մատնուած՝ կը դողար Օհան ամբողջ մարմնով և հազիւ շուրջը մթութեան մէջ նայիլ կը համարձակէր: Յետոյ, մնաց քարացածի պէս, քանի անգամ ուղեց փախլիլ, բայց չփոթած էր, խորանի դուռը փակուէր էր վրան, և ճամբան կորսնցուցած էր: Քանի մը անգամ խաչակնքեց երեսը.

զգուշութեամբ շօշափելով ձախակողմեան պատը, գտաւ խորհրդարանը ուր քահանան գինիին շիւր կը պահէր: Մէկ կողմ քաշեց փոքրիկ վարագոյրը և մինչ ձախ ձեռքը դողունի կերպով առաջ կը պարզէր, ոտքերը արդէն թուլցեր էին և Օհանը ծունկի էր եկած: Մատները դպան սկիհին. կրակէ այրածի պէս ձչեց ու թեւը ետ քաշեց. «Եա՛ Յիսուս Քրիստոս, եա՛ Յիսուս Քրիստոս», կրկնեց երեք անգամ ու աջ ձեռքը պարզեց այս անգամ խոյս տալով խորհրդարանի կեդրոնէն: Գտաւ իր փնտոածը ու դողդոջուն ձեռքերով վար առաւ:

Նայեցաւ, բայց մթութեան մէջ չտեսաւ զոյնը, բացաւ շիւր բերանը, երկու ձեռքերով ամուր բռնեց, ուղեց բարձրացնել, բերնին դնել, բայց դարձեալ ներքին կռիւր սկսաւ. ձախ ձեռքը կարծես վեր կը բարձրանար, իսկ աջը աւելի ուժով վար կը քաշուէր:

Ճարահատած՝ չորացած, դողդողացող շրթունքը շիւր բերնին կը մօտեցնէր, իրը յանկարծ խաւար խորանը լուսաւորուեցաւ. Օհանը զարհուրած տեսաւ փայլուն սիւնը խորհրդարանի մէջ. գլուխը դարձուց բնադդաբար, նայեցաւ լոյսի ուղղութեամբ և տեսաւ արեւելեան փոքրիկ պատուհանէն դուրս բոլորակ ու սիրուն լուսինը որ շեշտակի ուղիղ կը նայէր իր վրայ...:

Օհանի կայծակի ուժով ստացած սարսափը տարեհային էր...:

«Վա՛յ ինձ, գոռաց անագին ձայնով, ինկաւ դետին ու դարձեալ բարձրացաւ, — վա՛յ ինձ, — կրկնեց կարծես խեղդուելով, — տեսա՛ւ, կ'ասի, կ'ասի, — սկսեց խուլ կերպով մռնչել՝ խեղճը, — լուսինը արեւին կ'ասի, արեւը ամպերուն, ամպերը Սատոն. վա՛յ ինձ, կ'ասի՛ն, լուսինը արեւին կ'ասի, արեւը ամպերուն, ամպերը Սատոն...»

Երեսի վրայ ինկած՝ սառ դետին վրայ կը ցնցուէր և միեւնոյն բառերը կը կրկնէր, իսկ խորանի ու եկեղեցու կամարները արձագանգ կուտային իր աղիողորմ մռնչիւնին, ընդհանուր լուութեան ու կիսախաւարի մէջ:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Տ. և Տիկին Աղեքսանդր Փանոսեանի, իրենց ծաղկատի դաւկին՝ Նուարդ—Ալինէ Փանոսեանի մահուան առթիւ որ դեռ աշխարհը չտեսած՝ վեցամսեայ թարմ հասակին մէջ փակեց աչքերը, հրեշտակային խաղաղիկ քունով մը: Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ Պէօյիւքտէրէի եկեղեցին եւ թաղու մը՝ նոյն գիւղի գերեզմանատունը, Փանոսեանց ընտանեկան դամբարանին մէջ:

Մասիսի նախորդ թիւով խմբագրական հատուած մը նուիրած էինք նորագոյն հրատարակութեանց՝ «Հրատարակչական գործը մեր մէջ» խորագրին տակ: Հաճոյքով կիմանանք թէ չարթուս սկիզբը տպագրութեան յանձնուեր է նաև բանաստեղծութեանց հատորիկ մը, Աճըշանի, որ կը բովանդակէ Մ. Ա. Պարսամեանի ոտանաւորներու հաւաքածոն, ոտանաւոր—յառաջաբանով մը Աղեքս. Փանոսեանէ՝ ի նշան համակրանաց ու քաջալերութեան դեռատի բանաստեղծին նկատմամբ որ նոր գրիչներուն մէջ լաւագոյն տեղը կը գրաւէ արդէն:

Երկուշաբթի օրը, Պէշիկթաշի եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ պսակադրութիւնը Երկրագործական դրամատան գլխաւոր պաշտօնատարներէն Հրանտ էֆ. Ֆէրուհիանի՝ Օր. Զարուհի Տատեանի հետ, դուստր՝ Իզմիրի կուսակալութեան ճարտարագէտ Տատեան Սիմոն պէյի: Եկեղեցական արարողութիւններէն ետք՝ շնորհաւորական ընդունելութիւնք կատարուեցան Տրդատ պէյ Տատեանի ընակարանը:

Կայս. Բժշկական վարժարանի քաղաքային ճիւղի այս տարուան շրջանաւարտներուն մէջ կը յիշուի՝ իբրեւ ամէնէն յաջողակներէն մէկը՝ ծանօթ դեղագործ եւ Բերայի Աղքատախնամին գործօն անդամներէն Մաքսուտ էֆ. Նարիկէճեանի որդին, Յակոբ էֆ., որ փայլուն քննութիւն մը անցունելով առաջնակարգ դեղագործի վկայական ստացած է:

ԱՂԶԿԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԷՃ

(Ի Ի Ս Կ Ի Ի Տ Ա Ր)

Աղջկանց Ամերիկեան Գուլէճի յառաջիկայ տարելընքը կը սկսի սեպտ. 15ին: Գեշերօթիկ աշակերտուհիները Գուլէճ կը սպասուին 14ին: Հաստատութեան շէնքերն օժտուեցան կեդրոնական ջեռուցիչով մը, որ մեծապէս կը նպաստէ գիշերօթիկներու վիճակին հանգստաւէտութեան: Ուրիշ բարեօրոշումներ ալ պիտի ըլլան տարւոյն ընթացքին մէջ: Աւելի տեղեկութիւն ուղղոյնքի դիմելու են նամակով Գուլէճին նախագահին, կամ Սեպտ. 15ն ետքը անձամբ երթալու են Գուլէճ, կը խնդրուի նամակները զրկել անգլ. նամակատան խնամքով:

1—10

ԼԱ ՖՕՆՍԻԵՐ

LA FONCIÈRE

ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրդեհի, կեանքի եւ փոխադրութեանց

Դրամագլուխ 60,000,000 ֆր.

Սոյն ապահովագրական հանրածանօթ ընկերութեան կեդրոնական Տնօրէնութիւնը կը գտնուի Բարիզ եւ Դրամատունն է Բրէսի Լիօնէն:

Թուրքիոյ ճիւղին համար Ընդհ. Տնօրէնն է Պ. Սիւլվէն Միլ եւ գրասենեակները կը գտնուին Ղալաթիա, Պէրէքէթ խան, Թ. 10—11:

ԼԱ ՖՕՆՍԻԵՐ ապահովագրական ընկերութիւնը՝ ինչպէս հրդեհի եւ առեւտրական փոխադրութեանց, նոյնպէս կեանքի ճիւղին համար յոյժ նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ իր բազմաթիւ յաճախորդներուն զորս միշտ գոհ թողուցած է:

Հիմնադիր—Արսօմաէս Կ. Ս. Իիթիօնեան
Պատասխանատու—ՏԳՐԵՃ ՏՈՐՔ. ԵԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱՆ Օրագրի

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾԵՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.
Հրդեհի եւ կեանքի (Ի վիճման)

ՊՍՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒՆԻ ՏԵ ՊԱՊԻԷՆ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր . Ընկ . ընդդեմ հրդեհի եւ ծովային արկածների (Ի ՄԱՏԻՏ)

Ապահովագրութիւնք կը կասարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատւթունն է ի Կ. Պոլիս, Գոքսի Լիճն
Ընդն. եւ լիազօր անկալացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՍԵՄՅԱՆ
Գրասենեակ, Պոլիս, Հանգուլոյս խան, Թ. 52—53—54—55—56 5—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սւննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Մ Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

**Ջեռփի, ուռփի ու ուռփի եւ ձեռփի
միանգամայն մեկեւաներ
կը գանուին:**

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն՝ Սինկեր Ընկերութեան վաճառատանը մէջ՝

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

കുടുംബം

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամկէյին կայարանին դէմ.

2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

മുഖ്യ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամլէի կայարանին դէմ, Թ. 13.

2. Սուղթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՄԵԼՆԻՑԿԻ

Զարյր Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնանիւղեր գաւառաց բոլոր հաղափներուն մէջ :

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը: 5



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20-ի կայս. Ուլքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեռլին քաղաքի, Իրեն յատուկ շէնքը

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿԱՐԿԱԾ- ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱՌՔՈՎ եւ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ- ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ եւ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՎ- րուելուն դէմ: 50—15—85—45—4

Ընկերութեան դրամագումարը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա- գումար եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ալաբեկեան խան, Վոյվոսա, Ղալաթիա, Խաղր Զապիյա, Կոնստանդնուպոլիս 4 10

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՐՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցւահ բոցակի ճիւղեր

VICTORI ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ- BERLIN րուն վճարումները չ-բաթական մասնավճարներով, տեղի կունենան, սկսեալ 5 շրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ից 3րդ 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար- ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

այժմ 56 հրովարտակով եւ ուղղակի Օսմ. կայս. Պանքա

կառավարութեան հսկողութեան ներ- եւ Քրետի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՅԱՑԵԱՆ

Տնտես

Պոլիս Բաքրեքոզլու խան

ԵԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՔԷՉԷՃԵԱՆ

թիւ 45 եւ 45 Ե. 4-10

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Պատկերազարդ 1000 հաւելի եղերէ

բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բառերու նորոգումը ինչպէս
— գաւառական բառեր — հանրագիտական
հասկացողներ, երկրագործութեան, գիտա-
թեանց, դիցարանութեան, առողջաբանու-
թեան, օրինագիտութեան, ճարտարութեան
Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճիշտ եւ դիւ-
րամար բառագրքի մը պէտքը ընդհանուր
եղած էր ցարդ: Ան ալ պէտքը լրացնե-
լու կոչուած է այն գործն, օգտուելով հայ
եւ օտար բաղմթիւ բառագրքերէ: Խնամ-
քով հետազօտուած են բառերու ճշգրիտ
նշանակութիւններն, առնոց որոշ եւ ամփոփ
առնականներն, իրենց հակադրելով ու հա-
մանդրելով, հին ու նոր պէսպէս առում-
ներով: Զ-նց չէ առնուած նաեւ դնել բա-
ռերու ծագումն, կենդանեաց, բունաց ար-

դասակարգութեան վերաբերիլը, ի հարկին
առնոց թւաքերէն ու ֆունտներէն եւս:

Բացի բուն բառագրքէն՝ գործայտ մարդը
ընթացքին մէջ հանրագիտական հասկացող-
ներ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրա-
գործութեան, գիտութեանց, դիցարանու-
թեան, առողջաբանութեան, օրէնագիտու-
թեան, ճարտարութեան, գործնական կենաց
վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն
եւ միւսներն ալ յաջորդաբար կ'առնուաւորու-
պէս լայն պիտի տեսնեն: Թաւրթ ազնիւ եւ
տպագրութիւն ընտիր եւ խնամեալ: Վարդա-
րուած յատկապէս փորագրուած սիրուն եւ
ճաշակաւոր պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրա-
րին քաղաքներէն արժանի այն գերազան-
ցապէս օգտակար գործայտ համար, 20 դա-
նակն, Պոլսոյ, 25՝ գաւառաց, թղթատարի
ծախուց համար եւ 6 ֆրանք օտար երկիր-
ներու համար:

Հեղինակին հասցէն՝ 33449 Պոլսոյ
Կ. Պօլիս, Հաճօրուլօ խան, Թիւ 24
5-10

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարմ, հոտաւեհ եւ առողջաբար թէյերէն,
որոնք մարան եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
Ճէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Նգիպատ: 5-10



ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԷՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւաղաններ եւայլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին
10 զեղչով եւ կ'առնուին: Իսկապառիկ գրո-
նողներէն՝ 100ին 15 զեղչով: 5-10

ԴԵՂԱՐԱՆ

ԽԱՉԻԿ ՖԵՍՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մանսուր Փաշա Պաշի, Ապուր Է. Ի. Խանիկ Դեմ 261

Այս բաղամասի դեղարանը, այս առաջինը կազմակերպված է մեր երկրի Ֆեֆեմանի կողմից, քիչ ատենուան մեջ պատեր ունեցող գնահատելի արգոյ հասարակութիւն, որմէ քաջաբերութեամբ պէտքը կը զգայ իրեն աղքատութիւնը եւ նպատակը ներկայացնել հոգիութեան:

ՆՊԱՏԱԿ. — Գոյ ձգել իր յոճախողները միշտ՝ դեղերու թարմութեամբ, դեղագրութեամբ եւ ճշգրտակի պատրաստութեամբ, զնեւու չափաւորութեամբ եւ արեւեօտին խղճածիւ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապանխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղաբաժնի սկզբունքը եղած են:

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբաթ պատուաւոր թարմ քիւպիւ (աւր գալիսի) կը հասնին բաւարար: Բացի ասկէ, կը գտնուի օսմանեան եւ եւրոպական նոր եւ միշտ թարմ դեղեր եւ մասնադեղեր ի մէջ ալլոց Մալակայի եւ Պորտոյի քիւնիներ, անդակեան եւ Եւրոպական ամէն տեսակ թարմ համալին ջուրեր, Գոյօնեայի եւ Բաքրանի ջուրերու ալ խառն տեսակները եւսլին: Իսկ միջառաջական փօշիկն ամէնէն աղ-դեցիկ տեսակէն միշտ պատրաստ կը գտնուի:

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշեց մասնաւորաբար հանրածառ թժիշկ ԱԼԼԱԶԻԷՐՏԻ ԷՖ. որ ամէն Գլ. Եւ. Եր. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարձանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ. դեղարանին մասնաւոր դարձանսրահը, Դեղարանը ունի նաեւ Գիշերօթիկ ՍՊԱՍ 1—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիզի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չափով, այժմ հաստատուած է. Բերք Պէօլիւք Բարմաք Գարու, թիւ 16, Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանց մէ գտնուող գոյն մեթօտեանով կը բուժէ ջղախի ու հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցուծ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անդամալուծութիւն եւ կարկամութիւն եւսլին: Ասկէ զատ, ասկորի եւ օտարական խոլը (սրբաճա), առանց դժուարութեան նոր դրութեամբ մը կը դարձանէ, տեղը առանց յայտնի ընկու: Տոքթ. Էմիրզէ ԷՖ. կը գտնուի. Բերք Պէօլիւք Բարմաք Գարու, թիւ 16 տան մէջ, ուր կիրական է զատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրեթ օրերն ալ ճիւղաբար ըկ դարձանէ հիւանդները: 5—10

ՏՈՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պօլսոյ կայսր-բժշկական վարժարանին, առաջին Բարիզի Բժշկական համալսարանին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարաններու հիւանդութեանց: Պատուով կայսր-գիր ունի Պէրլինի, Լոնտոնի, Բեռլինի եւ ուրիշ երկիրներու Ակադ. օմիներէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պօլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարձա-յատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն, իսկ Բերք, Թաքիմ, Ֆրանսական հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.) 5—10